ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 961

Հունիս 18, 2013թ.

ՄԵԾԱՊԱՏԻՎ
ՏԻԿԻՆ ՋՈՒԼԻԱ ՏՈՒՄԱՅԱՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
30-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ

ՄԵԾԱՐԳՈ
ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
30-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԴՊԻՐ
Մոնրեալ, Կանադա

Մեծազնիվ Տիկին Տումայան և Տիար Չիլինկիրյան,

Ստացել ենք մայիս 31, 2013 թվակիր ձեր գրությունը, որով տեղեկացնում եք տարվույս մայիսի 24-25-ին գումարված Կանադայի Հայոց Թեմի Թեմական Պատգամավորական 30-րդ ժողովում Թեմական խորհրդի, Ընտրողական և Հաշվեքննիչ հանձնախմբերի անդամների ընտրության մասին:

Հայրապետական օրհնությամբ հաստատում ենք նորընտիր անդամների ընտրությունը՝ ըստ հետևյալի.

ա. Թեմական Խորհուրդ.

- Վազգեն Ալթունյան,
- Հրանդ Չիթաք,
- Արա Բոյաջյան,
- Ջուլիա Տումայան:

բ. Ընտրողական հանձնախումբ.

- Անդրանիկ Չիլինկիրյան,
- Մատաղ Մամուրյան:

գ. Հաշվեքննիչ հանձնախումբ.

- Ժիրայր Տոլաք,
- Արամ Իշնար,
- Վահե Քերեսթեճի:

Վստահ ենք, որ Թեմական վարչական մարմինների նորընտիր անդամները ամենայն նախանձախնդրությամբ պիտի շարունակեն իրենց գովելի նպաստը բերել Կանադայի Հայոց Թեմի պայծառությանն ու բարեզարդությանը:

Հայցում ենք Ամենակալ Տիրոջը, որ Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահի և պահպանի Կանադայի հայոց թեմի վարչական մարմինների բարեջան անդամներին, հավատավոր Մեր սիրելի զավակներին՝ պարգևելով քաջառողջ ու արևշատ կյանք և հարանորոգ հաջողություններ՝ ի փառս Աստծո և անսասանություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ